## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-17/1-Հ1
## 28.08.2017թ ԿՆՔՎԱԾ N ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-17/1 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «20» «12» 2017 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Էյ Վի Էն Գրուպ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Նիկոյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2017թ օգոստոսի 28-ին կնքված թիվ ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-17/1 գնման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) 7.8 կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Համաձայն ՀՀ կառավարության 07.12.2017թ թիվ 1548-Ն որոշման Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին ամբողջությամբ լուծել 2017թ օգոստոսի 28-ին կնքված թիվ ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-17/1 պայմանագիրը՝ ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման պատճառով:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ կրթության և գիտության նախարարություն | <<Էյ Վի Էն Գրուպ>> ՍՊԸ |
| ք. Երևան, Կառավարական տուն 2 | ք. Երևան, Բյուզանդի 1/3 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | <Էվոկաբանկ> ՓԲԸ |
| Հ/Հ 900011005866 | Հ/Հ 1660001274300100 |
| ՀՎՀՀ 02512868 | ՀՎՀՀ 02707077 |
| Նախարարության աշխատակազմի ղեկավար՝ | Տնօրեն՝ |
| ----------- Ն. Հարությունյան (ստորագրություն) | ----------- Ա. Նիկոյան (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |